«Հաստատում եմ»՝ _____

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական

համալսարանի ռեկտոր Ե. Սերոբյան

«18» հունիսի 2026թ.

ԿԱՐԾԻՔ
ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Քրիստինե Հրաչիկի Սաֆարյանի՝ «Հայաստանի և Իտալիայի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման համեմատական վերլուծություն» վերնագրով, ԺԳ.00.01 թվանիշով «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Քրիստինե Հրաչիկի Սաֆարյանի «Հայաստանի և Իտալիայի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման համեմատական վերլուծություն» թեմայով ատենախոսությունն արդիական է, քանի որ Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն կրթության և գիտության ոլորտում իրականացվող շարունակական բարեփոխումները պահանջում են միջազգային հաջողված փորձի գիտական ուսումնասիրություն, վերլուծություն և տեղայնացման հնարավորությունների գնահատում: Այս համատեքստում Հայաստանի և Իտալիայի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման առանձնահատկությունների համեմատական վերլուծությունը տեսական և գործնական նշանակություն ունի՝ նպաստելով ազգային կրթական քաղաքականության կատարելագործման և բարձրագույն կրթության կառավարման արդյունավետության բարձրացմանը:

Աշխատանքի ներածությունում հստակ ներկայացված են թեմայի արդիականությունը, նպատակը, խնդիրները, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, տեսական և գործնական նշանակությունը:

Առաջին գլխի, որը կրում է «ՀՀ բարձրագույն կրթության համակարգը» վերնագիրը, առաջին ենթագլուխը կառուցված է տրամաբանական հաջորդականությամբ և համապարփակ կերպով ներկայացնում է Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգի նպատակները, խնդիրները, կառուցվածքը, կրթական աստիճանները, ընդունելության կարգը և կրթության կազմակերպման առանձնահատկությունները: Հեղինակը լայնորեն օգտագործել է գործող օրենսդրական և նորմատիվ իրավական փաստաթղթերը, ինչը նպաստում է ներկայացված նյութի հավաստիությանը:

Երկրորդ ենթագլխում, որը կրում է «Կրթական քաղաքականությունը և իրավական դաշտը Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտում» վերնագիրը, հեղինակը համակողմանիորեն ներկայացրել է Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության ոլորտը կարգավորող հիմնական նորմատիվ-իրավական ակտերը, դրանց զարգացման փուլերը և ոլորտում իրականացված օրենսդրական բարեփոխումները:

Դրական է, որ հեղինակն անդրադարձել է ոչ միայն գործող օրենսդրությանը, այլև բարձրագույն կրթության ոլորտում իրականացված և շարունակվող բարեփոխումների գործընթացին՝ ներկայացնելով «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ նոր օրենքի մշակման, քննարկման և ընդունման առանձնահատկությունները: Առանձնահատուկ արժեք է ներկայացնում բուհական ինքնավարության, կառավարման համակարգի, ֆինանսավորման և որակի ապահովման ոլորտներում առկա իրավական հակասությունների բացահայտումը և դրանց քննադատական վերլուծությունը:

Առաջին գլխի երրորդ՝ «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգի ֆինանսավորումը» ենթագլուխում հեղինակը համակողմանիորեն ուսումնասիրել է բարձրագույն կրթության ֆինանսավորման գործող համակարգը, դրա իրավական հիմքերը, պետական և մասնավոր ֆինանսավորման հարաբերակցությունը, ինչպես նաև ոլորտում իրականացվող և նախատեսվող բարեփոխումները: Դրական է, որ ուսումնասիրվել են ոչ միայն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ցուցանիշները և բարձրագույն կրթության ֆինանսավորման ծավալները, այլև կատարվել

են համեմատություններ միջազգային կառույցների և ՏՀԶԿ երկրների համապատասխան ցուցանիշների հետ: Հեղինակի կողմից ներկայացված վիճակագրական տվյալները, աղյուսակներն ու գծապատկերները նպաստում են հետազոտության հիմնավորվածությանը և թույլ են տալիս բացահայտել ոլորտում առկա հիմնական միտումները:

Առաջին գլխի չորրորդ ենթագլուխը բավականին ծավալուն և տեղեկատվական է, ինչը գիտական տեսանկյունից բարձրացնում է դրա արժեքը, քանի որ ոչ միայն նկարագրում է Բոլոնյան գործընթացի պատմությունը և իրականացված բարեփոխումները, այլ նաև գնահատում է դրանց արդյունքները, ձեռքբերումներն ու առկա խնդիրները:

Հինգերորդ ենթագլուխը սկսվում է «համակարգ» հասկացության սահմանմամբ և բուհը ներկայացվում է որպես փոխկապակցված ենթահամակարգերի ամբողջություն: Բավական մանրամասն ներկայացված են կառավարման մարմինների գործունեությունը, ընդգծվում է հիմնադրամային կառավարման մոդելը, որը ՀՀ բարձրագույն կրթության կառավարման կարևոր առանձնահատկություններից է:

Վեցերորդ ենթագլուխը սկսվում է «որակ» հասկացության սահմանմամբ և կրթության որակի հիմնական գործոնների ներկայացմամբ: Ներկայացված է նաև «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի դերը, նպատակները և գործառույթները: Հեղինակը կարողացել է ցույց տալ, որ որակի ապահովումը միայն արտաքին գնահատում չէ, այլ նաև բուհի ներսում իրականացվող շարունակական գործընթաց:

Աշխատանքի երկրորդ գլուխը կրում է «Իտալիայի հանրապետության բարձրագույն կրթության համակարգը» վերնագիրը, որը բաղկացած է վեց ենթագլխից:

Առաջին ենթագլխում ներկայացված է Իտալիայի բարձրագույն կրթության համակարգի ձևավորման, զարգացման և ներկայիս կառուցվածքի վերաբերյալ մեծածավալ տեղեկատվություն: Այս ենթագլխի մի շարք հատվածներում

իրականացվում է համեմատություն Հայաստանի և Իտալիայի կրթական համակարգերի միջև, ինչը կարևոր է, քանի որ աշխատանքը համեմատական բնույթ ունի:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում հաջողությամբ ներկայացված է Իտալիայի բարձրագույն կրթության իրավական դաշտի էվոլյուցիան, ինչը թույլ է տալիս հասկանալու, թե ինչպես է ձևավորվել համալսարանական ինքնավարության և որակի ապահովման ներկայիս համակարգը: Հաջողված է ցույց տրված, որ Իտալիայում իրավական փոփոխությունները պարզապես օրենսդրական բնույթ չեն ունեցել, այլ ուղղված են եղել կոնկրետ քաղաքական նպատակների իրականացմանը:

Երրորդ ենթագլուխը նվիրված է Իտալիայի բարձրագույն կրթության համակարգի ֆինանսավորմանը: Այն ներկայացնում է ֆինանսավորման հիմնական աղբյուրները, ուսանողական աջակցության և կրթաթոշակային համակարգի առանձնահատկությունները, համալսարանների ֆինանսական ինքնավարության սկզբունքները, ինչպես նաև վերջին տարիներին ոլորտում իրականացված ֆինանսական փոփոխություններն ու դրանց ազդեցությունը:

Այս ենթագլուխը բովանդակային առումով բավականին ուժեղ է, քանի որ ներկայացված են ինչպես Բոլոնիայի գործընթացի ազդեցությունը, այնպես էլ Իտալիայի բարձրագույն կրթության համակարգում իրականացված հիմնական բարեփոխումները: Ատենախոսության երկրորդ գլխի հինգերորդ ենթագլուխը կրում է «Իտալիայի բարձրագույն կրթության համակարգի կառավարման առանձնահատկությունները» վերնագիրը: Այս ենթագլուխը բավականին հարուստ է փաստական նյութով, որտեղ կատարվել են զգալի ուսումնասիրություններ և օգտագործվել են տարբեր աղբյուրներ: Առանձնահատուկ արժեք ունի ուսանողական ներկայացուցչական կառույցների, ազգային ուսանողական խորհրդի և օմբուդսմենի ինստիտուտի նկարագրությունը, բարեփոխումների որոշ արդյունքների ներկայացումը:

Երկրորդ գլխի վերջին ենթագլխում առկա են ոչ միայն կառուցվածքային նկարագրություններ, այլ նաև վերլուծություններ՝ կապված Բոլոնյան գործընթացի,

հավատարմագրման և որակի ապահովման համակարգի զարգացման հետ, որը բարձրացնում է աշխատանքի գիտական արժեքը:

Հետազոտական աշխատանքի երրորդ գլխում ակնհայտ է հեղինակի կողմից կատարված ծավալուն վերլուծական աշխատանքը, կիրառված համեմատական մոտեցումը և ներկայացված ինքնուրույն մեկնաբանություններն ու եզրահանգումները: Այդ առումով աշխատանքը բավականին հաջող է ստացվել: Դրական է գնահատվում նաև համեմատական աղյուսակների առկայությունն աշխատանքում:

Աշխատանքի վերաբերյալ կան որոշ նկատառումներ, որոնք են.

1. Աշխատանքի եզրակացությունների 4-րդ և 5-րդ կետերը բովանդակային առումով փոխկապակցված են, ուստի նպատակահարմար կլիներ դրանք միավորել՝ խուսափելով մասնակի կրկնություններից և ապահովելով ավելի ամբողջական ներկայացում:
2. Աշխատանքի առանձին ենթագլուխների վերջում կարելի էր ներկայացնել համառոտ ամփոփումներ, ինչը կնպաստեր նյութի առավել համակարգված ընկալմանը և հետազոտության միջանկյալ արդյունքների հստակեցմանը:
3. Աշխատանքի որոշ հատվածներում հանդիպում ենք առանձին մտքերի մասնակի կրկնություններ:
4. Ատենախոսությունում առկա են առանձին տեխնիկական և լեզվառճական բնույթի անճշտություններ:

Նշված նկատառումները կրում են ոչ էական բնույթ և չեն ազդում հետազոտության գիտական արժեքի, հիմնական դրույթների հիմնավորվածության և ստացված արդյունքների արժանահավատության վրա:

Քրիստինե Հրաչիկի Սաֆարյանի «Հայաստանի և Իտալիայի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման համեմատական վերլուծություն» թեմայով ատենախոսությունը արդիական, ինքնուրույն իրականացված և գիտականորեն հիմնավորված համեմատական հետազոտություն է, որն ունի տեսական և գործնական կարևոր նշանակություն:

Հետազոտության արդյունքները բնութագրվում են գիտական հիմնավորվածությամբ, տրամաբանական ամբողջականությամբ և հետևողականությամբ, առանձնանում են փաստական հարուստ նյութի վերլուծությամբ:

Աշխատանքը, անշուշտ, կնպաստի ազգային կրթական քաղաքականության կատարելագործման և բարձրագույն կրթության կառավարման արդյունավետության բարձրացմանը:

Եզրակացություն.

«Հայաստանի և Իտալիայի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման համեմատական վերլուծություն» վերնագրով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի գիտական աստիճանների շնորհման կարգի 7-րդ կետի պահանջներին և Քրիստինե Հրաչիկի Սաֆարյանը արժանի է իր հայցած ԺԳ.00.01 թվանիշով «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Կարծիքը քննարկվել և ընդունվել է Մանկավարժության ամբիոնի՝ 2026թ.-ի հունիսի 15-ի թիվ 15 նիստում:

Նիստին մասնակցել են մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսորներ Ռ. Մարդոյանը, Ա. Մկոյանը, մանկ. գիտ. թեկնածու, դոցենտներ Լ. Ղուկասյանը, Մ. Կարապետյանը, Լ. Հակոբյանը, Ն. Ադամյանը, Լ. Միքաելյանը, Ն. Գրիգորյանը, Ա. Յայլոյանը, մանկ. գիտ. թեկնածուներ Մ. Ղալաչյանը, Ա. Զաղոյանը, Ն. Գալոյանը, դասախոսներ Մ. Խաչատրյանը, Ս. Համբարյանը:

Մանկավարժության ամբիոնի վարիչ, մ. գ. թ., դոցենտ՝ Լ. Ղուկասյան

18.06.2026թ.

Մանկավարժության ամբիոնի վարիչ Լ. Ղուկասյանի ստորագրությունը հաստատում եմ:

ՇՊՀ-ի գիտական քարտուղար, կ. գ. թ., դոցենտ՝ Կ. Պետրոսյան